ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Կ. Մ.

Հայդուկային շարժման վերաբերյալ Սփյուռքում գրվել և այսօր էլ գրվում են բազմաթիվ աշխատություններ, որոնք հավաստի և հարուստ նյութ են պարունակում:

Հայ ազատագական շարժման պանծալի էջերից է XIX դարավերջին օսմանյան բռնապետության դեմ Արևմտյան Հայաստանում տարերայնորեն ծավալված հայդուկային կամ ֆիդայական շարժումը: Այն արևմտահայության ոգու արդարացի պոռթկումն էր, ընդվզումն ընդդեմ անարդարության, բռնության, նվաստացման՝ հանուն գոյության, պատվի ու արժանապատվության: Ժողովրդի նըվիրյալ զավակները հանուն հայրենիքի ու ժողովրդի գիտակցաբար դուրս էին եկել հզոր թշնամու դեմ: Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում ծավալված ֆիդայական շարժումները, սկիզբ առնելով 1880-ականին, երեք փուլով (խմորումների շրջան, վերելք և մարում) շարունակվում են մինչև 1907-1908 թթ., այսինքն՝ մինչև Սուլուխի հայտնի կռիվը, Գևորգ Չաուշի (Գևորգ Ղազարյան) մահը և օսմանյան սահմանադրության ընդունումը: Դիտարկենք սփյուռքահայ հեղինակների տարբեր մոտեցումները շարժման առնչությամբ:

Սփյուռքում լույս տեսած ծավալուն և պատմական հավաստի փաստերով հարուստ ուսումնասիրությունների մեջ աչքի է ընկնում հայ քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ Ռուբենի (Ռուբեն Տեր-Մինասյան, 1882-1951)՝ հուշերն ու հիշատակություններն ամփոփող, յոթ ստվարածավալ հատորներից բաղկացած՝ «Հայ հեղափոխականի մը հիշատակները» աշխատությունը: Շարժման պատմության ամենատարբեր դրվագներին ու գրեթե բոլոր հայդուկների կենսագրություններին մանրամասն անդրադարձող այս գործը բացառիկ արժեք է ներկայացնում ոչ միայն հայդուկային շարժման, այլև հայ ազատագրական ողջ շարժման լուսաբանման տեսանկյունից: Յոթ հատորները առաջին անգամ լույս են տեսել 1951-1954 թթ., Լոս Անջելեսում, ապա վերահրատարակվել են Թեհրանում՝ 1982 թ.: Դաշնակցական կուսակցության կողմից Երկիր գործուղվելով՝ Ռուբենը, անկախ ամեն ինչից, երկար ժամանակ ստիպված էր վարել ֆիդայական կյանք, կռվել, սնվել, ապրել հայդուկների դժվար ու չարքաշ, վըտանգներով լի կյանքով: Հեղինակի բերած փաստերն ու վկայություններն այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունը, և «Հայ հեղափոխականի մը հիշատակները» հայդուկային շարժման մասին գրրված աշխատություններից առաջինն է, որտեղ գտնում ենք ֆիդայիների ավելի շատ անուններ ու նրանց մասին պատմություններ: Հեղինակն այնքան հետաքրքիր, հուզիչ է նկարագրում դեպքերը, պատմում հայդուկների մասին, որ ընթերցողն ակամայից իրեն զգում է որպես դեպքերի ականատես ու մասնակից: Ա և Բ հատոր-

ներում Ռուբենը հանգամանորեն ներկայացնում է հայդուկ գործիչներին, անդրադառնում հայդուկային կյանքի մանրամասերին, վարած կռիվներին, կրած դժվարություններին: Հետաքրքրական է հատկապես Գ հատորը, որտեղ հեղինակը ներկայացնում է իրադրությունը շարժումից առաջ, առաջին խմորումները, շարժման նախակարապետ գործիչներին՝ Արաբոյին, Դերգեվանքի Մխոյին և մյուսներին: Շարադրում է տեղի ունեցող դեպքերը՝ սկսած Մարգար վարժապետից ու Վարդենիսի, Արգավանքի դրվագներից, հասնելով 1905 թ.: Չնայած իր կուսակցական պատկանելությանը՝ Ռուբենը կարողացել է ձեռնպահ մնալ իրականությունը, դեպքերը աղավաղելուց և կանխակալ մոտեցումից. դա նրա աշխատությունը դարձնում է ավելի արժեքավոր: Նրա վկայությունները մեկ անգամ ևս ապացուցվում են Կարո Սասունու, Սարգիս և Միսաք Բդեյան եղբայրների և մյուս ժամանակակիցների ու ականատեսների կողմից: Դ հատորում նկարագրված դեպքերը տեղի են ունենում Տարոնում, 1906-1908 թթ.: Հատորի վերջում, կազմի վրա հայդուկների մասին գրված է. «Ես շատ սերունդներ տեսա տարբեր վայրերու մեջ, բայց այդ սերունդին համն ու հոտը տարբեր էր, ինչպես Արտամետի խընձորինը, թեկուզ մեջը որդ ինկած լինի...»[1]: Ե հատորում խոսվում է օսմանյան սահմանադրությունից հետո Տարոնում կատարված դեպքերի մասին, իսկ Զ և Է հատորներում պատմվում է 1909 թ. մինչև Հայաստանի Առաջին հանրապետության անկումը՝ 1920 թ., ընկած շրջանի պատմությունը: Մի խոսքով, որպես սկզբնաղբյուր, այն բացառիկ արժեք ունի հայ պատմագիտության ասպարեզում:

Սփյուռքում ստեղծված և ֆիդայական շարժմանը նվիրված մյուս մեծարժեք գործը Անդրանիկ Օզանյանի «Զոր. Անդրանիկ կը խոսի» աշխատությունն է, որը լույս է տեսել 1921 թ., Փարիզում: Անդրանիկը քննադատում է ՀՅԴ-ին՝ իրեն և շատերին հալածելու, միջկուսակցական հակամարտության և հայդուկային ուժերը պառակտելու համար: Սակայն միայն քարկոծել մի կուսակցության, որն այդ դըժվարագույն պահին հնարավորինս սատար է կանգնել իր ժողովրդին, ճիշտ չէ: Բայց Անդրանիկը իրավացիորեն մեղադրում է ՀՅԴ-ին Կովկասյան նախագիծն ընդունելու և արևմտահայերի ինքնապաշտպանության գաղափարը զանց առնելու, երիտթուրքերի հետ համագործակցելու և հայության դառը անցյալը մոռանալու համար. երբ Անդրանիկին էլ են առաջարկում ծանոթանալ Ալի փաշային և հաշտվել երիտթուրքերի հետ, նա ասում է, որ դա նույն թուրքն է, և չի կարելի հավատալ նրան. «…Հարցուցի փնտռեցի և հասկցա թե՛ այս այն Ալի բաշան է, որ Սասունի Տալվորիկի «Զբոսանք» թաղի բնակչությունը կոտորել տվավ եկեղիցիին մեջ... Իմ սովորական զայրույթովս պատասխանեցի այս բոլորին և ըսի. Խերը տեսնաք. բայց գոնե ժողովուրդը մի՛ խաբեք: Եվ «մնաք բարով» ըսելով մեկնեցա Եգիպտոս: 45 օր չէր անցած, երբ իմացա, թե՛ Թալեաթ և իր

[1] **Ռուբէն,** *Հայ յեղափոխականի մը յիշատակները, Լոս Անճելըս, 1951, հ. Դ, տե՛ս կազմը:*

նմանները կոտորել կուտան Ատանայի հայությունը»[2]: Անդրանիկը համոզված էր, որ «թուրքը մնում է թուրք», և նրան երբեք վստահել պետք չէ, և որ երիտթուրքը նույն թուրքն է, և պատմությունը բազմիցս դա ապացուցել է, իսկ դաշնակցական շատ գործիչներ հավատում էին երիտթուրքերի կեղծ ու ստահոդ խոսքերին, ավելին, չսթափվեցին անգամ Ադանայի կոտորածներից հետո:

Հայդուկների կենսապայմանների, կենցաղի ու պայքարի մասին է պատմում «Հայրենիքին ուխտավորները վրեժի ճամբուն վրա» աշխատության մեջ սփյուռքահայ Գ. Մուրատյանը: «Անոնք, այդ բուռ մը քաջերը, կյանքի բոլոր երանությունները արհամարհեցին և վտանգավոր ճամբուն հետևեցան՝ Հայրենիքին սիրույն անոր դառ-նությունները ճաշակելու համար, որովհետև անոնք, գիտակից իրենց կոչումին, չի հանդուրժեցին անտարբեր մնալ հանդեպ Հայրենիքի ցավերուն, երբ անդին դիվանենգ թշնամիին և անոր դավաճան ջոլիրին ձեռքերով իրենց մայրերն ու քույրերը կը լլկվեին կամ կը խողխողվեին»,- գրում է հեղինակը[3]:

Սփյուռքահայ Թեոդիկը, վկայություններ տալով հայդուկային խմբերի ու գործիչների մասին, գովեստով է խոսում քաջ հայդուկ Բուլղարացի Գրիգորի մասին. «...Կը հանդիպինք դեռ մարդերու պզտիկ թիվի մը որ կը սիրե անանուն ապրիլ, հակառակ իր մեծ անձնազոհությանց: Այս դասուն կը պատկանի ահա սկյուտարցի «խելոք» Հայ մը «Պուլկարացի Գրիգոր» որ ոչ ուսում ունի, ոչ գրիչ, ոչ ալ «Ազգային գործիչ»-ի արժանի պիտակ մը՝ իր անունին վրա: Երիտասարդ տարիքեն մտած է հեղափոխական դրոշի տակ և իր գործելու ասպարեզն ընտրած է Վասպուրական աշխարհը 15 տարի շարունակ...»[4]: Սույն աշխատության շնորհիվ հնարավոր է ավե-լի ճշգրիտ պատկերացում կազմել Վասպուրականի հայդուկային շարժման վերաբերյալ:

Հայդուկային շարժմանն անդրադարձել է նաև սփյուռքահայ Համբարձում Երամյանը: Հեղինակը հայդուկային շարժման մասին գրում է. «Հանագամանքներու բերմամբ այդ շարժումը ժամանակի պահանջ մըն էր այլևս»[5]: Այնուամենայնիվ, նա կարծում է, որ դա վաղաժամ էր և ոչ լավ նախապատրաստված: Խոսելով աշխարհա-գրական դիրքի մասին՝ նշում է, որ մենք չունեինք այն պայմանները, ուժը և դաշնակիցները, ինչպիսիք ունեին բալկանյան ժողովուրդները: Սակայն սխալմամբ, սուլթանի բռնությունները հետեվանք է համարում հայդուկային և «ցուցական» այն գործողությունների, որոնք կազմակերպեցին հայ քաղաքական կուսակցությունները Կ. Պոլսում, Սասունում, մյուս վայրերում: «Մեր կուսակցությունները,- գրում է նա,- չգիտցան կամ չկրցան համախումբ գործակցությամբ բլաններ նախապատրաստել՝ սպառնացող և վե-

---

[2] **Օգանեան Ա.,** *Զօր. Անդրանիկ կը խօսի, Բարիզ, 1921, էջ 14:*

[3] **Մուրատեան Գ.,** *Հայրենիքին ուխտաւորները վրէժի ճամբուն վրայ, Կ. Պոլիս, 1920, էջ 74:*

[4] **Թէոդիկ,** *Ամէնուն Տարեցոյցը, ԺԶ տարի 1922, Կ. Պոլիս, 1923, էջ 363:*

[5] **Երամեան Հ.,** *Յուշարձան Վան-Վասպուրականի, Ա հատոր, Ալէքսանդրիա, 1929, էջ 330:*

բահաս վտանգին դեմ պաշտպանելու համար ժողովուրդը...»[6]: Համամիտ չենք Երամյանի այն կարծիքին, որ «Հայ հեղափոխության, մասնավորապես Դաշնակցության գաղափարախոսները (ideologue) կամ ղեկավարները (լիտըր) Ժընևեն, Բարիզեն, Լոնտենեն և մերթ Մարսեյլեն կը ղեկավարեին տաճկահայերու ազատագրական դատը՝ Կովկասեն և Ատրպատականեն արկածախնդիր արշավանքներ ուղղելով դեպի Երկիր: Այս խումբերը կը կազմվեին հաճախ իսկապես անկեղծ հայրենասեր երիտասարդներե, որոնք սակայն արյան կարմիր գծեր միայն պիտի թողեին իրենց ետևեն, պատճառ դառնալով նաև զիրենք հյուրընկալող գյուղերու կոտորածին և քանդումին»[7]: Մեր կարծիքով, նախ, հայդուկային ոչ բոլոր քայլերն էին ղեկավարվում դրսից, երկրորդ, ֆիդայական արշավանքները արկածախնդրություն լինել չեն կարող, քանզի հայրենասիրությունը արկածախնդրություն չէ, և, վերջապես, հայդուկները հայրենասեր, անձնվեր անձինք էին:

Արժեքավոր նյութ է պարունակում սփյուռքահայ հասարակական գործիչ, հրապարակախոս, արմենական կուսակցության անդամ Արտակ Դարբինյանի աշխատությունը[8], որտեղ հեղինակը նշում է, որ բազմաթիվ հայրենասիրական, ազատատենչ և ռազմաշունչ երգեր ամենքի շուրթերի վրա էին: Դրվատանքով է խոսում Շատախ գավառի Կաճետ գյուղի բնակիչներ Շերոյի ու Չաթոյի քաջագործությունների մասին, որոնք ահ ու սարսափ էին տարածել քրդերի ու թուրքերի վրա: Նա շատ է կարևորում զենքը Երկիր փոխադրելու խնդիրը և գրում է, թե ինչպես էր թուրք-պարսկական սահմանագլխին՝ Դերիկի Ս. Աստվածածին վանքը դարձել կարևոր անցակետ:

Հավաստի են նաև Նիկոլ Դումանի գրառումները[9]: 1895 թ. մըտնելով Երկիր և Բողազ Քյասանի մոտ ծանր մարտի բռնվելով քրդերի հետ՝ նա կարողանում է ճեղքել իրեն «...պաշարողները փոթորիկի մը պես: Քյուրտերը Դուման (Մրրիկ) անունը հոն կը կցեն անոր անունին»[10]: Դումանն ուներ մեծ փորձառություն, խորապես տեղյակ էր միջազգային քաղաքականությանն ու աշխարհի անցուդարձին: Թեև Նիկոլը հայդուկային խմբեր Երկիր մտցնելը սխալ էր համարում, սակայն ՀՅԴ-ի որոշմանը դեմ գնալ չէր կարող: Նրա հիմնական մտահոգությունը զենք հայթայթելն էր և միշտ զենքի փնտրտուքի մեջ էր: Այն կարծիքին էր, որ հայությունն ինքը պետք է զենք հայթայթի, և հայ հարուստը իր քսակը պետք է բացի ազգի համար[11]: Ֆիդայական շարժման գործիչների ու կռիվների մասին է պատմում անհայտ հեղինակի կողմից Սփյուռքում գրված «Աղբյուր Սերոբ և Գեորգ Չավուշ» խորագիրը կրող աշխատությունը, որը պատմագիտության տեսանկյունից մեծ արժեք է ներկայացնում:

---

[6] *Նույն տեղում, էջ 349:*

[7] *Նույն տեղում, էջ 428:*

[8] **Դարբինեան Ա.,** *Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Փարիզ, 1947:*

[9] **Նիկոլ Դուման,** *Նիկոլ-Դուման(գիծեր իր կեանքէն), Պուքրէշ, 1933:*

[10] *Նշվ. աշխ, էջ 3:*

[11] *Նույն տեղում, էջ 12:*

Գիրքը կազմված է երկու մասից. առաջինը Աղբյուր Սերոբի (Սերոբ Վարդանյան), իսկ երկրորդը՝ Գևորգ Չաուշի մասին է: Անծանոթ հեղինակը ակնածանքով է նկարագրել հայդուկային պայքարի այդ երկու հսկաների կյանքն ու գործունեությունը՝ զուգահեռ անդրադառնալով նաև մյուս հայդուկներին: «Սերոբ՝ թե՛ անհատական մարդ և թե՛ հանրային գործիչ՝ անվախ և անբասիր եղած է: Ունեցած է շատ մաքուր և վճիտ կյանք մը, որուն էջերուն մեջ կարող ենք մեր ազգային նկարագրին համար հպարտության պատգամներ գտնել: Չարքաշ ու տոկուն, ազնվական հոգիով մը լեցուն, զինքը ճանչցողներուն ու շրջապատողներուն վրա ունեցավ բարոյական մշտափայլ հեղինակություն: Իր թափառիկ, բայց նվիրված կյանքը անոր մեջ պողպատե կամք մը գամած էր. բոլոր իր ազդեցությունը գործ կը դներ որ իր ընկերները մնան ճշմարիտ անձնվիրության տիպարներ, մաքուր, անշահախնդիր և ընդունակ գաղափարի զոհողության. այդ ոգվով կրթեց ու քարոզեց...»,- ասվում է Սերոբի մասին[12]: Գևորգի մասին գրված է. «...18 տարի առանց զենքը վար դնելու, մղած է քառասունեն ավելի կռիվներ հաղթական և հիանալի: Իր վեհանձն հոգին՝ անողորմ ու անսիրտ բռնավորների առջև և աղավնիի պես քաղցր իր ամենօրյա կյանքին ու ընկերական վերաբերմունքին մեջ՝ չէ ճանչցած ոչ մեկ փառասիրություն բացի զենքի հաջողութենեն... Որովհետև, իդեալը՝ որ առաջնորդեց իր կյանքը, այնքան սուրբ ու նվիրական էր՝ որքան իր սիրած ժողովրդին տանջանքն ու թշվառությունը»[13]:

ՀՅԴ գործունեությանը և հայդուկային շարժման տարբեր դրրվագներին է նվիրված «Դիւան Հ.Յ.Դաշնակցության» երկու հատորից բաղկացած աշխատությունը: Գրքում փորձ է արվում գովաբանել Սարգիս Կուկունյանին՝ իր կատարած արշավանքի համար, թեև, արշավանքն այնքան էլ հաջողված չէր: Դատապարտում ենք մեծ հայդուկ Սարկավագի մասին հանիրավի բացասական կարծիքը: Խիզախ հայդուկ Բալաջանի հուշերում նշվում է, որ Կուկունյանը համագործակցում էր Սարկավագի հետ, որը «1887-1890 թվականներին աշխատում էր առաջ բերել հայ-քրտական մերձեցում: Կուկունյան արշավախմբի կազմության նախաձեռնողներից մեկն էր: Տարա-կարծություն առաջ եկավ նրա և Կուկունյանի միջև... հետևանքը եղավ ողբերգական. Կուկունյանը նրան սպաննել տվավ իբրև դավաճան: Սարկավագը, իհարկե, դավաճան չէր. նրա արյունը իբրև արատ մնաց Կուկունյանի խղճին վրա, որ մինչև մահ տանջվում էր»[14]: Համառոտ ներկայացված է նաև սեբաստացի ֆիդայի Կարապետ Ղումրիկյանի հերոսական անցյալը: Կարապետը դարձել էր ՀՅԴ անդամ և, հայդուկային կռիվներին մասնակցելուց զատ, ջանքեր էր թափում Երզնկայի և Դերսիմի քրդերի հետ համագործակցության եզրեր գտնելու ուղղությամբ[15]:

---

[12] *Աղբիւր Սերոբ և Գէորգ Չաւուշ, Աթէնք, 1933, էջ 33:*

[13] *Նույն տեղում, էջ 64:*

[14] *Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, հ. Առաջին, Պոսթըն, 1934, էջ 13:*

[15] *Տե՛ս նույն տեղում, էջ 317:*

Փոքր Հայքի հայդուկային շարժումների մասին ևս Սփյուռքում գրվել են մի շարք ուշագրավ գործեր: Այդ առումով նշանակալից են պատմաբան, հասարակական գործիչ Արշակ Ալպոյաճյանի աշխատությունները[16]: Դրանք հանգամանորեն վկայում են Փոքր Հայքի գավառահայության վիճակի, ֆիդայիների գործած սխրանքների մասին: Բերանից բերան էին անցնում քաջաբազուկ Չելլոների, Մինաս Օղլուի, Ժիրայրի, Տիշլեկ Հովհաննեսի (Հովհաննես Արզումանյան), Դանիել վարդապետի, Արզուլան Հայկունու (Ստեփան) և շատերի անունները: Եթե «Պատմություն Եվդոկիո Հայոց» գրքում Ալպոյաճյանը խոսում է Եվդոկիայում հայդուկապետ Արմենակ Հայրապետյանի ու նրա խմբի քաջագործությունների, Շմավոնի, Հովհաննես Մինաս Օղլուի և շատերի սխրանքների մասին, ապա «Պատմություն Մալաթիո Հայոց»-ը՝ Մինաս Օղլուի պես քաջ և հանդուգն անհատների՝ ժողովրդի գովքին արժանացած ատիյամանցի Սարգսի և Սաման Եմեզիի[17] մասին. «...հիմնովին տարբեր է զույգ ըմբոստներու գործունեությունը հասարակ ավազակներու կողոպուտեն ու սպանութենեն: Իբրև վեհանձն ու խիզախ մարդիկ, երբեք չեն վնասեր հասարակ ճամբորդին, չեն սպաններ հանձնվող ոստիկանը և ամենեն գովելին՝ իրենց ապաստանած գյուղերու աղքատ բնակչության կը բաժնեն ունեցած հարստությունին: Զույգ ըմբոստներուն առնական կեցվածքը, անսահման ժողովրդականությունը, և ցնցող քաջությունները պատճառ կը դառնան որ իրենց անունին շուրջ երգեր ու հազար ու մի առասպելներ հյուսվին»[18]:

«Հիսնամյակ (1887-1937) Սոց. Դեմոկրատ Հնչակյան կուսակցության» գրքում հարուստ վկայություններ կան Փոքր Հայքի խիզախ հայդուկ Նազարեթ Չաուշի կյանքի ու քաջագործությունների մասին: Ն. Չաուշը վարել է բազում կռիվներ, որոնցից մեկի՝ Բողազ-Քյասանի կռվում (26.X.1895) կնքում է իր մահկանացուն: Հարուստ փաստեր են ներկայացվում Շմավոն Կաֆյանի, Ժիրայրի, Արամ Աչըգպաշյանի, Թորոս Ծառուկյանի, Սարգիս Պալայանի, Մինաս Գալստյանի, Հաբեթ Թավաքալյանի, Գալուստ (այլ անուններով՝ Գեղամ, Հակոբ աղա) Անդրեասյանի, Համրի (Արամ Գրիգորյան), Որսորդի (Տիգրան Իզմիրյան) և շատերի մասին[19]: Խիզախներ են Չելլոներն ու Ժիրայրը, որոնք կախաղանի մոտ անգամ չեն վհատվում: Երբ 1894 թ. մարտի 24-ին Ժիրայրին մոտեցնում են կախաղանին, նա ասում է. «...Ես Չելլոներու հաջորդներեն եմ: Ես լեռ բարձրացա և ձեզ ամենքդ կեղեքող բռնատիրության դեմ բողոքելու, և այս ճամբով ձեր մեջ գիտակցության սերմերը ցանելու համար»[20]:

---

[16] *Տե՛ս* **Ալպոյաճեան Արշակ,** *Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, հ. Ա-Բ, Պատմութիւն Եվդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, 1961:*

[17] *Ս. Եմեզիի իսկական անունը Հովհաննես էր, ոմանք* **Ավետիս Սեփետճյան** *են կոչել, հեղափոխական անունը եղել է* **Երկաթ***:*

[18] **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, էջ 868:*

[19] *Տե՛ս Յիսնամեակ (1887-1937) Սոց. Դէմոկրատ Հնչակեան կուսակցութեան, Փրովիտէնս, 1938, էջ 96:*

[20] *Նույն տեղում, էջ 66:*

Սփյուռքահայ Մ. Ավետյանի «Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870-1920) հուշամատյան և զոր. Անդրանիկ» աշխատությունը ևս նվիրված է հայդուկային շարժման պատմությանը և ֆիդայիների հերոսացած կերպարներին: Հեղինակն անդրադառնում է Փոքր Հայքի, ինչպես նաև Կիլիկիայի ու Կապադովկիայի շրջաններում ֆիդայական գործունեությանը, հայդուկներ Մեծն Մուրադին, Գալուստ Արխանյանին, Դանիել Չաուշին, Արամ Աչըգպաշյանին, Ժիրայրին և ուրիշների: Թորոս Ծառուկյանի (որին Չելլո էին կոչում) և իր խմբի մասին Մ. Ավետյանը գրում է. «Չելլոն՝ կտրիճ զինավարժ, պատկառելի հսկա մըն էր, իր կողքին ունենալով Կյուլպենկը, Բարսեղը, Փանոսը, Միրճանը – իրմով հինգ հոգի: Այս խիզախ և քաջարի հեղափոխականները, որոնց աչքառու գործունեությունը կը դրոշմվի տեղացի հայ և այլազգ ժողովուրդներու սրտին վրա, ոչ միայն առարկա կը դառնա անոնց առօրյա պատմության, այլև երգերուն և գովեստներուն՝ զանազան լեզուներով... Կապադովկիո շրջանին, Չելլոյի մը երևումը, իր ազդեցիկ, ասպետական երևույթով, իր ձիով ու զենքով, թե Հայուն և թե այլազգի սրտին վրա դրոշմված էր առասպելական հերոսի մը տպավորությունը՝ խանդավառելով մանավանդ Հայերը...»[21]:

Փոքր Հայքում խիզախությամբ աչքի է ընկել նաև Արամ Աչըգպաշյանը (Գրիգոր) կամ Մնձուրի Առյուծը: Նրա և Փոքր Հայքի հայդուկային կռիվների մասին է գրում սփյուռքահայ հեղինակ Սիրվարդը: Նա իրավացիորեն կարծում է, որ մինչև հայ կուսակցությունների հանդես գալը եղել է ֆիդայական շարժում և գրում է, որ. «Հայկական ազատագրական շարժման պատճառները, նոյն իսկ հեղափոխության սաղմերը ավելի առաջ գոյություն ունեին, քան հայ հեղափոխական կուսակցությունները: Հայ հեղափոխական շարժումը շատ ժողովրդական եղած է...»[22]: Շարունակելով Արամի մասին՝ գրում է, որ նա սերտորեն համագործակցել է Դանիել Չաուշի հետ՝ Սեբաստիայում և Շաբին Գարահիսարի շրջանում: 1894-1896 թթ. համիդյան կոտորածների ժամանակ շատ բնակավայրեր Արամի ու իր խմբի շնորհիվ փրկվեցին ջարդերից: Պատմում է նաև Հակոբ Անդրեասյանի, Հաբեթ Թավաքալյանի (Հովսեփ, Ջան–Փոլադ), Էլմաս Դարբինյանի (Մալեմեզյան) և այլոց մասին:

Հայ հայդուկային շարժման հիմնահարցերի ուսումնասիրության համար արժեքավոր է սփյուռքահայ հեղինակ Պատրիկ Ն. Առաքելի աշխատությունը՝ նվիրված Փոքր Հայքում ծավալված ֆիդայական շարժման, կռիվների, «ասպատակների» գործունեության լուսաբանմանը: 1890-ից հնչակյանները գործունեություն են ծավալում Սեբաստիայում և Փոքր Հայքում, սակայն մինչ այդ ժողովուրդն արդեն տարերայնորեն սկսել էր պարտիզանական, հայդուկային կռիվները: Շարժման կենտրոնն այստեղ Մարզվանն էր, ականավոր հայդուկներից էին՝ Կարապետ Գաբիկյանը, Սուրեն Սուրենյանը,Ատոմ

---

[21] **Աւետեան Մ.,** *Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 36:*

[22] **Սիրվարդ,** *Արամ Աչըգպաշեան (Հերոս Փոքր Հայքի), Փրովիտէնս, 1957, էջ 8:*

Ասլանյանը, Գաբրիել Կաֆյանը և ուրիշներ: XIX դարավերջին Փոքրը Հայքում, ըստ հեղինակի, գործում էին մոտ 1000 «հրոսակներ»[23], որոնք մարտնչում էին Սեբաստիայում, Զիլեում, Եվդոկիայում, Ամասիայում, Մարզվանում: Փոքր Հայքի ֆիդայական շարժման գործիչներից էին նաև Չելլոն և Մնձուր գավառի Արմտան գյուղից՝ Գալուստ Արխանյանը, որն իր խմբով գործում էր Բինկյան լեռների շրջանում: Պատրիկ Առաքելը, ակնածանքով խոսելով Ժիրայր Պոյաջյանի (Մեծ Մուրադի եղբայրը) մասին, նշում է, որ թուրքերը նրան անվանել են «Գապա Սագալ»՝ իր թավ մորուքի համար. «Ան հանկարծ, անսպասելիորեն կը հայտնվեր ու այդպես ալ կ'անհայտանար իր ձիավոր քանի մը ընկերներով, միշտ զինված, ահարկու... նույն իսկ թուրքեր կը հարգեն եղեր զայն, որպես իգիթի, որպես Ճան-ֆեդայի, քանի որ ան հաճախ պաշտպան կանգնած է եղեր կեղեքվող թուրք աղքատ գյուղացիներուն»[24]: Հեղինակը հիացմունքով է պատմում Նազարեթ Լուսիկյանի, Դանիել Չաուշի, Սև Համբարի, Պետրոս Մերկերյանի, Ոսկան Տողրամաճյանի, Մովսես Նահապետյանի, Ղազարոս և Նազարեթ Ղազարյանների, Թոտորակցի Բարսեղ Դարբինյանի և շատերի մասին:

Սփյուռքահայ հեղինակ Մ. Սերոբյանը կարողացել է ճշմարտացի ներկայացնել Հայ դատն ու արևմտահայերի պայքարի պատմական անհրաժեշտությունը[25]:

Տվյալ ժամանակաշրջանի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կարո Սասունին (1889-1977), որը և իրադարձությունների ականատես է: «Պատմություն Տարոնի աշխարհի» գրքում նա նկարագրում է Տուրուբերանի աշխարհագրական դիրքը, հարստությունները, բնակչության թվական և հարաբերական կազմը, զբաղմունքը, սոցիալական վիճակը, հայերի ու մահմեդականների փոխհարաբերությունները, ապա քննարկում է «նախահեղափոխական» դեպքերը, որոնք Ահարոնքի, Պերմի, Փսանքի, Շենիկի գյուղացիների առաջին դիմադրական քայլերն էին. «Երկաթե շերեփի սկզբունքը կը հնչեր հայ լեռնաշխարհեն և կը վարակեր նաև Մուշն ու Դաշտը: 1870-ին, երբ Խրիմյան Հայրիկ բարեկարգություններ կը պահանջեր, կը դներ նաև զենքի պահանջը»[26]: Թուրքական իշխանությունները 1880 թ. հետո սկսեցին ավելի ու ավելի սեղմել բռնության օղակը, հրահրել քրդերի ու այլ մահմեդական ցեղերի սանձարձակությունները: Այդ ամենի հետևանքով, սասունցիները, իշխանների՝ Շենիկի Գրգոյի, Գելիեգուզանի Պետոյի ու Տեր Քաջի, Տալվորիկի Գասպարի ու Թաթարի, Խիանքի Վարդանի, Հրայրի ու Վարդան վարդապետի և ուրիշների գլխավորությամբ, զինվեցին և սկսեցին դիմագրավել թուրքերին. «Ազատության և բարենորոգությանց հույսը իրապաշտ

---

[23] *Փոքր Հայքում, Կիլիկիայում հայդուկները կոչվում էին հրոսակ, ասպատակ, որը նույն ֆիդային է:*

[24] **Պատրիկ Ն.,** *Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ և գաւառի հայութեան, հ. Ա, Պէյրութ, 1974, էջ 642:*

[25] **Սերոբեան Մ.,** *Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով. վերլուծումներ Հայկ. հարցին շուրջ, Կահիրէ, 1948:*

[26] **Սասունի Կ.,** *Պատմութիւն Տարօնի աշխարհի, Բէյրութ, 1956, էջ 524:*

ժողովուրդը կը կապեր զենքին հետ: Զենքի անհրաժեշտությունը ամեն ոք կը զգար իր միջավայրի հարկադրանքեն դրդված»,- գրում է Կ. Սասունին[27]: Համամիտ ենք Սասունու այն տեսակետին, որ ֆիդայական շարժումը կար այն ժամանակ, երբ դեռ գոյություն չունեին հեղափոխական կուսակցությունները: Ուշագրավ և արժեքավոր են Արգավանքի և Վարդենիսի դեպքերի, 1889 թ. ռես Օհանին այրելու, Գյուլիզարին Մուսա բեյի կողմից առևանգելու, Ղըզըլա- ղաճ գյուղի դիմադրության մասին տեղեկությունները[28]: Սասունի 1894 թ. ինքնապաշտպանության պարտությունը հեղինակը բացատրում է Սասունի լեռնցիների միայնակ մնալու հանգամանքով: Թե-րևս տեղին է Կ. Սասունու դժգոհությունն այդ առումով, սակայն պետք է նշել, որ հայոց լեռնաշխարհը բոլոր կողմերից պաշարման մեջ էր, իսկ հայկական նահանգները միմյանցից բաժանված էին, ուստի Սասունի ինքնապաշտաններին օգնություն ցույց տալն անհնար էր: Թեև Սասունի դիմադրությունը պարտվեց, բայց. «...արթընցուց Հայոց ազգային զգացումները և մանավանդ թմրած մարտական ընդունակությունը»[29]: Հեղինակը Սասունում տեղի ունեցածը համարում է ապստամբություն: Ի դեպ, այդ կարծիքին են նաև մի շարք այլ ուսումնասիրողներ, սակայն այդ մոտեցումը ճիշտ չէ: Պետք է հստակ տարբերել «ապստամբությունը» «ինքնապաշտպանությունից». սասունցիները պահանջներ չէին ներկայացրել իշխանություններին ու մերժում ստացել, և այդ պատճառով էլ՝ ապստամբել: Իշխանությունները, չհանդուրժելով Սասունի հայերի կիսանկախ վիճակը, հարձակում սկսեցին, որպեսզի հայերին թույլ չտան հզորանալ, ուստի սասունցիներն էլ ստիպված էին դիմագրավել թալանելու, սպանելու, հայերի պատիվն ու իրավունքները բռնաբարելու եկած բազմահազար թուրք-քրդական զորքերին: Պարզ երևում է, որ դա ինքնապաշտպանություն էր: Կ. Սասունին 90-ականի երկրորդ կեսի ֆիդայական շարժման վերելքի մասին նշում է. «Ֆետայական խոյանքները քաջություն կը ներշնչեին ազատության գործին նվիրված երիտասարդության և նոր գործելակերպի մը հորիզոն կը բանային այն մարտիկներուն առջև, որոնք անձնուրացությամբ կ'ըսեին. – Քաջությամբ մեռցուք ի վերա աշխարհիս մեր: Ֆետայական հզոր շարժումն էր այդ, որ կու գար դիմադրելու դաժան բռնակալության, անհատական զոհողությամբ և կամ փոքրիկ խումբով մը միայն»[30]: Հեղինակը, խոսելով Ճարտարի, Թորգոմի, Խանի, Նևրուզ Օնիկի ու մյուս զինատար խմբերի՝ Երկիր անցնելու մասին, անդրադառնում է Աղբյուր Սերոբի, Տուրբախի, Իսո Կորյունի, Կայծակ Վաղարշակի, Մակարի, Գևորգ Չաուշի, Անդրանիկ Օզանյանի, Հաճի Հակոբ Կոտոյանի, Սեյտո Պողոսի, Երկաթի (Արմենակ Լևոնյան), Չալփափախ Միսաքի, Պոլեյան Պողոսի, Կորյունի, Սեբաստացի Մուրադի, Ռուբենի (Ռուբեն Տեր-Մինասյան) և

---

[27] *Նույն տեղում, էջ 533:*

[28] *Այդ մասին մանրամասն տե՛ս* **Գևոնեան (Տէր-Կարապետեան) Ա.**, *Գիւլիզար, Ե., 1992:*

[29] **Սասունի Կ.,** *Պատմութիւն Տարօնի…, էջ 579:*

[30] *Նույն տեղում, էջ 596:*

բազմաթիվ այլ նվիրյալների գործունեությանը: Կ. Սասունին առաջին անգամ փորձել է տալ հայդուկային շարժումների ժամանակագրությունը՝ այն կապելով տվյալ փուլում ֆիդայական ուժերի գլուխ անցած հայդուկապետերի անունների հետ: Այսպես, նա ողջ հայդուկային շարժումը բաժանում է չորս շրջանի՝ 1. Սերոբյան՝ 1897-1899 թթ.՝ այն կոչելով «Սերոբի ազգապետություն», 2. Անդրանիկի՝ 1899-1901 թթ., 3. Հրայրի՝1902-1904 թթ., 4. Գևորգ Չաուշի ու Կորյունի՝1904-1907 թթ.: Շատ կարևոր մի հանգամանք ևս. Կ. Սասունին կարողացել է հստակ տեսնել և տալ այն մարտավարության բնորոշումը, որը որդեգրել էին հայդուկապետեր Հրայրը և Անդրանիկը: Սասունու «Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մեջ» աշխատությունն արժեքավոր է նրանով, որ լույս է սփռում ոչ միայն Արմենակ Ղազարյանի՝ Հրայրի հայդուկային, կազմակերպական գործունեության, այլև ողջ ֆիդայական շարժման առավել կարևոր դեպքերի, գործիչների ու նրանց գործունեության մանրամասերի վրա: «Հայկական ազատագրական գործը,- գրում է Սասունին,- համազգային իր բնույթով, կը պահանջեր համազգային շարժում մը: Հրայր համազգային այդպիսի շարժման մը հավատացողներեն էր, ու այդ պատճառավ հայ գյուղական զանգվածները կ'ուզեր շարժման մեջ դնել, հեղափոխության տարերքը լայն շրջանակով մեծցնելու համարս[31]: Սասունին հավաստում է, որ Սերոբի մահից հետո տարաձայնություններ են ի հայտ գալիս Հրայրի ու Անդրանիկի միջև: Խնդիրը մարտավարական տարբերություններն էին: Եթե Անդրանիկը կողմնակից էր հայդուկային դյուրաշարժ խմբերով շեշտակի և հանկարծակի հարվածներ հասցնելուն և նույնը պահանջում էր Հրայրից ու մյուս հայդուկներից, ապա Հրայրը, անվերապահորեն դեմ լինելով դրան, պնդում էր, որ ժողովրդին անհրաժեշտ է նախ զինել և նախապատրաստել ընդհանուր ապստամբության, այլապես մեծ կորուստներ կունենան: Երբ Անդրանիկը Հրրայրից պահանջում է փախչել և բարձրանալ լեռները, Հրայրը նրան պատասխանում է. «...եթե ինքը լեռ բարձրանա, պիտի դառնա պարզ ֆեդայի մը, մինչդեռ հեղափոխական գործը կը պահանջեր լայն աշխատանք տանիլ ժողովրդական զանգվածներուն մեջ, ինչ որ ինքը կրնար կատարել, երբ փախստական չէր, և երկրորդ, որ ֆետայական խումբերը հեղափոխության թռուցիկ զորամասերն էին... Հեղափոխության հիմնական գործը ժողովուրդն ամբողջ ոտքի հանելն էր, խմբական կռվի փոխարեն, ընդհանուր ապստամբության պատրաստությունն էր»[32]: Հայ պատմագիտությունը ուշադրության է արժանացրել օսմանյան բռնատիրության դեմ հայ-քրդական կամ այլ դաշինքի հարցը, որը, սակայն, շարժման ղեկավարների կողմից տարբեր ժամանակներում տարբեր կերպ է ընկալվել: Սասունին գրում է նաև այդ հարցի շուրջ հայդուկապետերի դիրքորոշումների մասին: Անդրանիկը իրավացիորեն անիմաստ էր համարում քրդերի հետ դաշ-

[31] **Սասունի Կ.,** *Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, Բեյրութ, 1964, էջ 11:*
[32] *Նույն տեղում, էջ 35:*

նակցելու ցանկացած փորձ, քանզի հայ ժողովրդի անցյալը միշտ դա է ցույց տվել: Ինչ վերաբերում է Հրայրին, ապա նա հավատում էր, որ նման դաշինք, այնուամենայնիվ, հնարավոր էր: Բայց ժամանակը ցույց տվեց, որ ինչպես նախկին նմանատիպ բոլոր ձեռնարկները, Հրայրի այդ քայլերը ևս ապարդյուն էին:

Հայդուկային շարժման և հատկապես նրա սկզբնական շրջանի ու առաջին ալիքի մասին կարևոր ու հավաստի նյութ են տալիս ժամանակակից և ականատես, տարոնցի Սարգիս և Միսաք Բդեյան եղբայրները «Հարազատ Պատմություն Տարոնո» աշխատության մեջ: Նրանք արդարացիորեն բարձր են գնահատել հայդուկային շարժման ակունքներում կանգնած՝ Հակոբ Սարկավագի դերը: Ուլու Ճամին անունով, ծպտված շրջելով քրդաբնակ շրջաններում՝ կոչ էր անում թուրքերի դեմ ստեղծել հայ-քրդական միասնական ճակատ: Ս. և Մ. Բդեյաններն ըստ արժանվույն նրկայացրել են նաև մեկ այլ խոշոր հայդուկի՝ Մշո դաշտի Վարդենիս գյուղից Մարգար վարժապետի (ծնված1859 թ.) կյանքն ու գործունեությունը: «Իր շնորհիվ էր որ Վարդենիսի մեջ ավելի կանուխեն մուտք գործած էին ազատությունը... ան էր որ առաջին անգամ ըլլալով՝ արգիլեց քյուրտերու մուտքը հայ գյուղին մեջ...»[33]: Բդեյանները ֆիդայական շարժումների նկարագիրը հասցնում են մինչև Սուլուխի կռիվը. Գևորգ Չաուշի, Սեյտո Պողոսի, Ջնդոյի և ուրիշների մահից հետո մնացած հայդուկները սփռվում են լեռնաշխարհի տարբեր անկյուններ, իսկ շարժումը աստիճանաբար մարում է: Անընդունելի մտքեր է արտահայտում սփյուռքահայ հեղինակ, բժիշկ Իսահակ Տերտերյանը: Նրա կարծիքով, երբ Մ. Փորթուգալյանը հնչեցրեց իր մարտակոչը, դեռ ոչինչ պատրաստ չէր, ոչ զենք, ոչ փամփուշտ, ոչ էլ մարդկային ուժ: Դա, մեր կարծիքով, սխալ պատկերացում է: Հայ ժողովրդի դըժբախտության մյուս պատճառը նա համարում է մեր երկրի աշխարհագրական դիրքը: Հայերին մեղադրում է, թե ինչու են ընդդիմանում, երբ իրենց թալանում են, ավարառության են ենթարկում, և իբր այդպիսի բաներ որտե՞ղ չեն լինում, և ո՞ր ժողովրդի մոտ չկան դրանք. «Հարկավո՞ր էր արդյոք կենցաղային այս սովորական երեվույթների համար հեղափոխական ծրագիրներ մշակեինք և փոթորկեինք մեր և մեր համերկրացի ժողովուրդների կյանքը և հանեինք նրանց իրար դեմ...»[34]: Եթե հայերի իրավունքների ու կյանքի, պատվի բռնաբարումները, սպանությունները նա համարում է սովորական և կենցաղային երևույթ, ապա անհասկանալի է նման հեղինակի հայ և հայեցի լինելը կամ առհասարակ շրջահայաց մտավորական ու գիտակից մարդ կոչվելը: Իմաստազուրկ են նրա խոսքերը՝ ասված հայդուկների, նահատակ ֆիդայիների հասցեին. նրանց պայքարը Տերտերյանը համարում է անտեղի և ոչ անհրաժեշտ[35]:

Հայդուկային շարժման կարևոր օջախներից էր Բարձր Հայքը՝ Կարին (Էրզրում) քաղաքով: Այստեղ են ծնվել ու մեծացել

---

[33] **Բդեեան Ս. և Մ.,** *Հարազատ Պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, էջ 82:*

[34] **Տերտերեան Ի.,** *Հայկական գոյամարտը, Երկերի ժողովածու, հ. վեցերորդ, Թեհրան, 1957, էջ 53:*

[35] *Նույն տեղում, էջ 121:*

ֆիդայական շարժման տասնյակ ականավոր գործիչներ, հերոսներ: Նրանց մասին ուշագրավ տեղեկություններ է տալիս սփյուռքահայ պատմաբան Ղազար Չարըգը: Մեծ ակնածանքով է խոսում ծնունդով ազատատենչ ու հեղափոխական, երիտասարդ ֆիդայիների մասին, որոնք ստույգ մահը գիտակցելով՝ նետվել են կռվի ու «զարկի» ասպարեզ: Նա առատ փաստեր է ներկայացնում կարինցիների հերոսական մասնակցության մասին՝ մասնավորապես նշելով, որ Կարնո փառքն են Քեռին (Արշակ Գաֆավյան, Քյաֆթառ Արշակ), Արամ Արամյանը (Աշոտ, Թաթուլ), Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան), Վարդգեսը (Հովհաննես Սերենկյուլյան), Տուրբախը (Հարություն Այվազյան), Գարեգին Կարնեցին (Գարեգին Ղոռյան), Հովհաննես Կորկոտյանը, Սեպուհը, Կայծակ Առաքելը և ուրիշներ: «1895 թվի ահավոր դեպքերեն հետո Կարնո և Բարձր Հայքի երիտասարդության մտասևեռումն էր ու միակ իտեալը, անցնիլ Կովկաս, դառնալ ջան ֆետայի, մտնել հայդուկային խումբերու մեջ, այդ խումբերու հետ մտնել Երկիր, վրեժ լուծելու համար թուրքեն և քյուրտեն. և կամ կռվի դաշտին վրա, զեն ի ձեռին մեռնիլ, տանջված ու հալածական, բայց միշտ ազնիվ իր ժողովուրդին համար»,- գրում է Չարըգը[36]:

Հայ հայդուկային շարժման, քաղաքական կուսակցություննե- րի, նրանց դերի մասին հետաքրքիր դատողություններ է անում սփյուռքահայ հեղինակ Լևոն Չորմիսյանը: Նրա բազմաթիվ հակասական մտքերի մեջ հատկապես քննադատության է արժանի ֆիդայական շարժման և գործիչների մասին արտահայտած այն կարծիքը, թե ահաբեկչական են ֆիդայիների գործողություններն ու հերոսական կռիվները. «Եթե աչքի առաջ ունենանք... Խանասորի արշավանք, Սերոբի, Գևորգ Չավուշի, Անդրանիկի և այլոց հեղափոխական խումբերուն կռիվները, զանազան մահափորձերը և այլն, կը տեսնենք, որ անոնց մեծ մասը ահաբեկչական արարքներ են..»[37]: Անհասկանալի է Չորմիսյանի այն պնդումը, թե իբր օտար պետությունները գաղտնի և անուղղակի միջամտում էին հայդուկների գործողություններին: Այդ ինչպես եղավ, որ եվրոպական պետությունները միջամտեցին ֆիդայիների գործերին: Քաջ հայտնի է, որ այդ ժամանակ զենքի խիստ կարիք կար, և եթե դրսից աջակցող, միջամըտող երկրներ լինեին, լավ զինվելով՝ հայդուկները մեծ հաջողությունների կհասնեին: Սխալ է հեղինակի նաև այն կարծիքը, թե հայդուկային պայքարի անհաջողություններից մեկն էլ այն է, որ բոլոր որոշումներն ընդունվել, արշավանքները ղեկավարվել են առանց տեղացի՝ սասունցի, մշեցի, վանեցի, սեբաստացի, զեյթունցի ֆիդայիների: Հեղինակը մոռանում է, որ Անդրանիկը, Գևորգ Չաուշը, Հրայրը, Սեբաստացի Մուրադը, Արաբոն, Մարգարը և հայդուկների մեծ մասը արևմտահայեր էին, ավելին, սկզբնական շրջանում նրանք էին որոշում իրենց քայլերը, և ոչ թե որևէ կուսակցություն:

---

[36] **Չարըգ Ղ.,** *Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Բեյրութ, 1957, էջ 593:*

[37] **Չորմիսեան Լ.,** *Կուսակցութիւնները, Պէյրութ, 1965, էջ 38:*

Ափսոսում է, որ արդյունքները քիչ էին. «Ամենեն շոշափելի և դրական արդյունքը հայ հեղափոխության՝ եղավ վտարումը և ջնջումը ստրկամտության ոգիին, բռնության հետ հաշտվելու տրամադրության՝ ժողովուրդի լայն խավերուն: Որևէ հորիզոնի տակ երբ այսօր հայ մարդը առնական կեցվածք մը ցույց կու տա և չի հանդուրժեր նվաստացումներու, կարևոր չափով կը պարտի այդ հպարտությունը հեղափոխության: Այդքանը միայն ստանալու համար արժե՞ր թափված գետերով արյունը, միլիոնավոր զոհերը»[38]:

Հրանդ Գանգրունին՝ հայդուկային շարժման ջերմեռանդ պաշտպանը, վկայում է, որ այդ շարժումը ծանր կացության մեջ գտնվող ժողովրդի համար անհրաժեշտ քայլ էր, որի գլխավոր ուժը հայ գյուղացիությունն էր: Նա համոզված էր, որ հայերը չէին կարող սպասել ավելի լավ և նպաստավոր ժամանակների, քանի որ ձուլվում, գաղթում և ոչնչանում էին: Անխնա քննադատում է այն հեղինակներին, իր ասելով՝ «կաչաղակ» պատմաբաններին, որոնք հայերի ըմբոստացումների հետևանք են համարում ջարդերը, մյուս վայրագությունները: Ճշմարիտ է Հ. Գանգրունին, երբ գրում է. «Առանց Գում Գափուի, Սասունի, Զեյթունի, Շապին-Գարահիսարի, Վանի, Սուետիո, Փոքր Հայքի և այլ շրջաններում հայկական դիմադրական փորձերուն ալ, մտածված ջարդի և տեղահանության քաղաքականությունը պիտի կիրարկվեր հայուն դեմ: Այդ ընդվզումները ոչ թե պատճառը, այլ՝ արդյունքը հանդիսացան, և կամ շարունակվող և վտանգավոր դարձած ջարդերուն դեմ հերոսաբար կռվելով մահանալը՝ սողալեն նախընտրելու ճանապարհը... պատվավոր մահը՝ ստրակական կյանքեն»[39]: Օրինակներով ապացուցում է. եթե հայերը զենք էին բարձրացնում Սասունում, ապա ինչո՞ւ էին կոտորվում մյուս գավառների հայերը, կամ Գում Գաբուի ցույցի համար չէին պատժվում միայն Պոլսի հայերը և այլն:

Սփյուռքի շատ այլ հեղինակներ էլ են անդրադարձել հայ հայդուկային շարժմանը՝ տարբեր հարցերի նկամամբ ունենալով սեփական դիրքորոշումներ: Նրանց տարաբնույթ տեսակետները խնդրո առարկայի լուսաբանման առումով միայն նպաստում են ավելի լավ հասկանալու հայոց պատմության տվյալ շրջանի և առհասարակ հայ ազատագրական պայքարի պատմութան այդ հերոսական փուլի անցուդարձերը: Իհարկե, ինչպիսիք էլ լինեն նրանց մեկնաբանությունները, միևնույն է՝ հայդուկային շարժումը Արևմտյան Հայաստանում օրինաչափ, օբյեկտիվ անհրաժեշտություն էր և պետք է տեղի ունենար, իսկ թե ինչպես այն լուծեց իր առջև դրված խնդիրը, այն է՝ ազատագրել արևմտահայությանը թուրքական տիրապետությունից, դա արդեն հարցի մյուս կողմն է: Ֆիդայական շարժումը եղավ և մնում է հայ ազատագրական պայքարի փառավոր ու անկրկնելի էջերից մեկը: Այն ունեցավ նաև պատմական նշանակություն. վերածնեց հայի ազատատենչ ոգին, որի վառ ապացույցը

---

[38] *Նույն տեղում, էջ 47:*

[39] **Գանգրունի Հ.,** *Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնապետութեան դէմ (1890-1910 թթ.), Պէյրութ, 1973, էջ 148:*

XX դարավերջի արցախյան ազատագրական պայքարն էր ու ֆիդայական մարտավարության վերածնունդը: Ի տարբերություն նախորդի՝ այս պայքարը ավարտվեց փառապանծ հաղթանակով և Արցախի՝ Մայր Հայաստանի մի պատառիկի ազատագրմամբ:

ГАЙДУКСКОЕ ДВИЖЕНИЕ В СВЕТЕ ИСТОРИОГРАФИИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

АРАКЕЛЯН К. М.

Резюме

Фидаинское или гайдукское движение являет собой разновидность национально-освободительной борьбы. Велико его значение в контексте реализации международного принципа самоопределения наций. Изучение истории фидаинского движения, его роли и значения в национально-освободительной борьбе армянского народа против османской тирании в конце XIX – начале XX вв. нашло отражение также в историографии армянской диаспоры.